

2021 ՅՈՒՆՈՒԱՐ 6-Ի ԿՈՉԸ՝ ՃՐԱՆՍԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՒՌՔԻՆ

«ՀՐԱՏԱՊ Է ՃՐԱՆՍԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՒՌՔԸ ԱՒԵԼԻ ԼՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ՝ ԱՆՈՐ ՆՈՐ ԹԱՓ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

Այսօր կ'ապրինք Հայաստանի պատմության ամենին ծանրակշիռ շրջաններին մէկը: Նոյնիսկ նախքան Արցախեան պատերազմի աղետալի աւարտը, որ երեսուն տարի է ի վեր սնուցուող անկախութեան յոյսերը տակնուվրայ բրաւ, Ֆրանսայի, Հայաստան/Արցախի եւ Թուրքիա/Ազրայի մէջ քաղաքական համաձայնի գարգացումը արդէն անհրաժեշտ դարձուցած էր Ֆրանսայի մէջ սփիւռքեան կառույցի ամրապնդումն ու կատարելագործումը եւ անոր արդիւնաւէտութեան բարձրացումը: Հակամարտութեան ողբերգական հետեւանքները մեզ կը պարտադրեն արագացնելու ակտիւ շարժումը, որպէսզի արագօրէն կարելի դառնայ կայացնել Ֆրանսայի հայկական սփիւռքին նոր խթան հազարդերու էական որոշումները:

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱԻԷՐՆԵՐ

Մենք հիմա շրջադարձային փուլի մը կը գտնուինք, քանի կը գիտակցինք, որ աւանդական քաղաքական եւ մշակութային խնդիրներէն անդին, հակադասական նոր մարտահրաւերներ կան մեր առջեւ: Հանրային կարծիքին մէջ ծագումով հայ Ֆրանսացիներու վայելած ազնիւ վերաբերումը պէտք չէ, որ մեզի արգելք հանդիսանայ այս խնդիրներու հակադասական ծաւալը տեսնելու:

Հարցը նախ եւ առաջ կը վերաբերի Ֆրանսայի մէջ հայկական մշակութային ժառանգութեան պահպանման: Ամէնէն երիտասարդ սերունդներու շրջանակին մէջ Հայոց լեզուին եւ մշակութային փարոսը կը տկարանայ՝ որքան զօրանայ համարկումը: Մշակութային հաստատութիւններու տեղատուութիւնն ու դպրոցներու անբաւարար միջոցները կարելիութիւն չեն ընծայել բաւարար կերպով դարձանելու այս թերութիւնը:

Միւս կողմէ, ծագումով հայ Ֆրանսացիներու օրինակելի համարկման ընտրութիւնը այժմ կը բախի Հայոց պատմական ոսոխին կողմէ թշնամանքի աճով Ֆրանսայի հողին վրայ իսկ: Այս երեւոյթը, որ քանի մը տարի առաջ անկարելի էր երեւակայել, կը դրսեւորուի քանի մը ձեւով.՝ գինուորեալ (militant) ընկերակցութիւններու կողմէ Յեղափոխութեան ժխտողականութիւն (ճանաչման եւ անոր քրէականացման դէմ պայքար, Պատմութեան դասերու վերանայման համար դատաւարութիւններ...), «Գորշ գայլեր»-ն նման ռազմականացում կազմակերպութիւններու կողմէ ֆիզիքական սպառնալիքներ, Ֆրանսայի քաղաքական կեանքէն ներս մուտք (քաղաքային խորհուրդներ, ընկերակցութիւններ եւ այլն) կուսակցութիւններու խողովակով, որոնք ուղղակի կը գործադրեն Թուրքիոյ կառավարութեան հրահանգները:

Այս իրավիճակը, անկասկած, յատուկ զգոնութիւն կը պահանջէ կանխելու համար Ֆրանսահայերու նուաճումներուն եւ հպույթեան կենսունակութեան համար անհրաժեշտ պայմաններուն սպառնացող վտանգը:

ԹՈՅԼ ԿԷՏԵՐ

Մինչեւ վերջերս մեզի կը թուար, որ քաղաքական նպատակներու վրայ մեր կեդրոնացումը՝ ազգային մակարդակով մեր լաւագոյն կազմակերպուած ոլորտն է: Ասկայն, պատերազմը մեզի ցոյց տուաւ, որ այդ ուղղութեամբ մեր աշխատանքը անբաւարար է:

Եթէ Ֆրանսայի սփիւռքին զօրաշարժը օրինակելի էր, ապա ան չունէր կապի բաւականաչափ միջոցներ, ժամանակին ահազանգելու եւ էպակա կողմնորոշելու համար ֆրանսական դիւանագիտութիւնը, որպէսզի Ֆրանսա պետական մակարդակով աջակցի Հայաստանին, ու պաշտպանէ ժողովուրդներու ինքնորոշման սկզբունքն ու երաշխատէ միջազգային իրաւունքի յարգանքը: Կ'որժէ ասոր պատճառները ուսումնասիրել եւ լուծումներ առաջարկել. ուշացած եւ մակերեսային լուպիինկ, լրատվութեան, քաղաքական եւ ակադեմիական շրջանակներու մօտ արձագանգի սահմանափակ կարելիութիւններ, անբաւարար իմացական եւ նիւթական միջոցներ եւ այլն...

Այս պատերազմով ի յայտ եկած՝ սփիւռքի արհեստավարժութեան պակասը առ առաւել անհասկանալի կը լինի, քանի որ ի տարբերութիւն անցեալ տասնամեակներուն, ծագումով հայ Ֆրանսացիներու ներկայ սերունդները իրենց աշխատանքին եւ արժանիքներուն շնորհիւ հասած են ուշագրաւ դիրքերու. ան ըլլա՛յ գործարարութեան, ըլլա՛յ քաղաքականութեան մէջ, ըլլա՛յ գիտական եւ մտաւոր աշխարհին մէջ, հետազոտութիւններու կամ բժշկութեան մէջ: Մենք շուտով պէտք է հասնինք մեր համակարգումը արհեստավարժ մակարդակի հասցնելու նպատակին:

ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԸԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մագումով հայ Ֆրանսիացիները կը կազմեն աւելի քան 600.000 հոգիէ բաղկացած սփիւռք մը: Ան կազմուած է անցեալ դարի միջպատերազմեան շրջանին եւ ուռճացած է ներգաղթի յաջողական ալիքներով, ինչ որ զայն մղած է զարգանալու բազմազան ոճով: Նոյնիսկ այսօր, այս սփիւռքը կը հարստանայ բազմաթիւ նոր ընտանիքներով, որոնք կու գան ուղղակի Սուրիայէն, Հայաս-

տանէն եւ Արցախէն, եւ որոնք աստիճանաբար կը համարկուին, միաժամանակ համայնքային նոր շափանիչներ որոնելով: Այս բազմազանութիւնը հարստացման աղբիւր է պայմանով, որ ան ըլլայ միատրուած ու համակարգուած: Մինչ հետզհետէ համարկուած առաջին սերունդները կը հեռանան սփիւռքէն, ան սփիւռքը շաջողեցաւ լիովին խաղալ իր դերը՝ նորերու համարկումին եւ զանոնք հիներուն կապելու գործին մէջ: Բացի այս բոլորէն, կան ծագումով հայ շատ մը Ֆրանսացիներ, որոնք տաղանդաւոր ըլլալով՝ հանդերձ՝ չեն քաջալերելու մաս կազմելու հաւաքական ներուժին կազմակերպական մեր աշխատանքներուն մէջ թափանցիկութեան եւ արհեստավարժութեան բացակայութեան պատճառով:

ՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Արդէն քանի մը տասնամեակ է CCAF յաջողած է պետական մարմիններու մօտ լսելի դարձնել ծագումով հայ Ֆրանսացիներուն ձայնը: Եթէ անոր առաքելութեան ամէնէն տեսանելի երեսն է տարեկան ընթերցը, որուն կը մասնակցի Հանրապետութեան նախագահը, ապա պէտք չէ թերագնահատել անոր կառուցներուն ազգային համակարգման աւելի անտեսանելի աշխատանքը:

Մինչդեռ, վերը նշուած մարտահրաւերները կը պահանջեն նոր յաւակնութիւն մը: CCAF-ի մշտականութիւնն ու օրինականութիւնը երաշխաւորելու համար պէտք է զայն օժտել մէկ կողմէ ազգային եւ տարածաշրջանային լրացուցիչ պաշարներով, եւ միւս կողմէ՝ բազմակարծութեան եւ ժողովրդավարական ներկայացուածութեան վրայ հիմնուած կառավարմամբ, զերծ՝ որեւէ տեսակի քաղաքական ճնշումէ: Այս բոլորը՝ աւելի լայն նպատակներ հետապնդելու համար:

ԳՈՐԾԵԼ ԱՐԱԳ ԵՒ ԵՌԱՆԴԱԳԻՆ

● Վերեւ համառօտ նշուած գործողութիւնները յաջողութեամբ իրագործելու համար անհրաժեշտ է ձեռք բերել **ցիւրակաճ զգալի միջոցներ**, որոնք այսօր խտտօրէն կը պակասին CCAF-ին:

● Ապա, վերեւ է արագ ներդրումներ կատարել **մետիա եւ թուային գործիքներ** մէջ, մէկ կողմէ՝ սփիւռքի բոլոր բաղադրիչները իրարու կապելու, եւ միւս կողմէ՝ որոշումներ կայացնողներու դիրքորոշումները, գործողութիւններն ու ձեռքբերումները հասարակութեան հաղորդելու նպատակով:

● Արդիւնաւէտ գործունէութիւն ապահովելու համար՝ պէտք է հաստատել **խորհրդակցական մարմիններու հետ գործակցող՝ թափանցիկ եւ ժողովրդավարական ղեկավարութիւն**, որ ըլլայ ազգային եւ տարածաշրջանային կառուցները իր հովանիին տակ առնող կազմակերպութիւն մը, եւ որ թոյլ պիտի տայ մասնակցի առաւելագոյն թիւով ներկայացուցիչներու: Աւելի յստակ ձեւաբանելով՝ մասնակցիներու շրջանակը պէտք է ընդլայնուի, մինչ ներկայիս կը սահմանափակուի միայն ընկերակցութիւններով:

● Եւ հուսկ, հրատապ անհրաժեշտութիւն է ստեղծել ռազմավարական հետազոտական մարմին մը, որ կը համախմբէ հետազոտողներ եւ փորձադէտները Հայաստանի ի նպաստ գործողութիւններու ուղղութիւնները ճշդելու համար:

Այս նոր հնարաւորութիւններու եւ այս նորովի կազմակերպման միջոցով է, որ CCAF պիտի կարենայ իրագործել Հայութեան խթանման քաղաքականութիւն մը եւ կատարել գործողութիւններ՝ չենելով հետեւեալ 3 հիմնասիւններու վրայ.

1. Ազդեցութիւնը բանեցնել մեր կրթական, քաղաքական եւ ընկերային շրջապատին վրայ, անոր մէջ հետաքրքրութիւն առթելով Հայութեան վերաբերող բոլոր նիւթերու նկատմամբ: Ասիկա պէտք է ներառէ մարդկային իրաւանց պաշտպանութեան արժէքներու խթանում եւ ատելութեան ու անարդարութեան դէմ պայքար, որոնք հիմնական արժէքներ են՝ ծագումով հայ Ֆրանսացիներու քաղաքական ծինը (ADN) բաղադրող: Ասիկա պէտք է կատարուի մասնաւորապէս Յեղափոխականութեան, անոր (Յեղափոխականութեան) Ֆրանսայի եւ Եւրոպայի հետ առնչութեան մասին գիտելիքներու տարածման, ինչպէս նաեւ Ֆրանսայի մէջ զարդանքներէն, համալսարաններէն եւ մտաւոր աշխարհէն ներս ժխտողականութեան մերժման գործողութիւններու ընդլայնման միջոցով:

2. Համակարգել Երկրին տարածքին մշակութային, կրթական, մտաւոր, կրօնական եւ տնտեսական ոլորտներու մէջ կատարուող բազմաթիւ նախաձեռնութիւնները՝ զարգացնելու համար որոշ գործառնողութիւն, թերեւս գործակցութեան եղբր գտնել անոնցմէ որոշներու միջեւ, ապահովելու համար անոնց տնտեսական մշտականութիւնը, միեւնոյն ժամանակ պահպանելով տուեալ նախաձեռնութիւններու ինքնավարութիւնը:

3. Հաղորդակցիլ սփիւռքէն ներս ու դուրս՝ ժամանակակից միջոցներով սահմանակրգային (institutionnel) կաշէնով, ընկերային ցանցերու, աւանդական լրատվութեան մէջ ներկայութեամբ եւ զարգացնելով նոր լրատու միջոցներ (podcasts...):

Այժմ այնքա՛ն հակադաս կ'է սփիւռքի մտաւոր, նիւթական եւ գործնական առումով վերագինման եւ որակական ուսումի աշխատանքը. մեր առջեւ ծառայած մարտահրաւերները մեզի կը սպասեն: Այս կոչին միակ նպատակը կարիքներու ճշդումն ու որակաւորումն է: Այս ուրուագիծը պատրաստուած է ծագումով հայ խումբ մը Ֆրանսացիներու կողմէ, որոնք համոզուած են խնդրին հրատապութեան եւ չեն խորշած անոր հակա ծաւալէն: Վերոյիշեալ թեմաներէն իրաքանչիւրին վերաբերեալ արդէն իսկ կատարուած են խորհրդածութիւններ եւ նախաձեռնուած են նախնական աշխատանքներու: Բայց դեռ շատ հարցեր պէտք է արժարծուին, որոնք կը մտնեն հաւաքական խորհրդածութիւններու եւ աշխատանքի շրջանակին մէջ, նաեւ կը թեկադրեն համակարգումը բազմաթիւ ընկերակցութիւններու, հասարակութիւններու եւ խումբերու, որոնք այսօր կեն-

ԻՍԻ-ԼԷ-ՄՈՒԼԻՆՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ ՀՄԸՄ 7,5 ԹՈՆ ՄՆՆԴԵՂԷՆ, ՀԱԳՈՒՍՏ ԵՒ ԴԵՂՈՐԱՅՔ ԲԱԺՆԱԾ Է ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԿԱՐԻՔԱԽՈՐՆԵՐՈՒ

Նոր տարուան եւ Ս. Մննդեան տօներու սեմին, ՀՄԸՄ 7,5 թոն սննդեղէն, հագուստ եւ դեղորայք բաժնեց լիբանանահայ ընկերային առումով կարիքաւոր պարագաներու: Օժանդակութիւնը տրամադրեց Փարիզի արուարձաններէն Իսի-Լէ-Մուլինոյի քաղաքապետութիւնը, Պէյրութի նաւահանգիստի պայթուածին առիթով իր կատարած մարդասիրական օգնութեամբ:



Արդարեւ, քաղաքապետ Անտրէ Սանթինիի նախաձեռնութեամբ եւ փոխքաղաքապետ Արիստիտ Խանճեանի գլխաւորութեամբ, Պէյրութի պայթուածէն անմիջապէս ետք, Իսի-Լէ-Մուլինոյի մէջ ծայր առաւ կիբանանցիներուն օժանդակութեան ծրագիր մը, որուն մասնակցեցան քաղաքին բնակիչները, որոնց կարգին՝ ՀՄԸՄ-Ֆրանսի անդամները: Ծրագիրը նպատակադրեց օժանդակել պայթուածէն ամէնէն աւելի վնասուած Պէյրութի մարտնի եւ հայ համայնքներուն: Առ այդ, օժանդակութիւնները ուղղուեցան մարտնիներու Պէյրութի առաջնորդարանին եւ ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ճամբով ՀՄԸՄ-ի կիբանանի ընտանիքին:

Նախատեսուած օժանդակութիւնը Պէյրութի նաւահանգիստ հասաւ Նոյեմբերին: Օժանդակութեան հետ եօթնօրեայ այցելութեամբ մը Պէյրութ այցելեց Իսի-Լէ-Մուլինոյի քաղաքապետի ներկայացուցիչ փոխքաղաքապետ Արիստիտ Խանճեան, որ այս առիթով ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամներու ընկերակցութեամբ տեսակցութիւններ ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին, Հայ կաթողիկէ Գրիգոր-Պետրոս Բ. հոգեւոր տիրոջ, կիբանանի Հայոց թեմի առաջնորդ Շահէ արք. Փանոսեանի, կիբանանի մէջ Ֆրանսայի եւ Հայաստանի դեսպաններուն, Հայկական երեսփոխանական պլոքին եւ ՀՅԴ կիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունիի, Պուրճ Համուտի քաղաքապետ Մարտիկ Պողոսեանի, մարտնիներու Պէյրութի առաջնորդին, «Ազգակ», «Արիան Լը Փուր» օրաթերթներու եւ «Վանայ ձայն»-ի սնորհէութիւններուն հետ: Ան նաեւ ընթերցելի հիւրը եղաւ ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան, որ այս առիթով երախտագիտութեան եւ շնորհակալութեան յուշանուէր մը յանձնեց Իսի-Լէ-Մուլինոյի քաղաքապետութեան:

Կիբանան հասած օժանդակութիւնը հանգրուանեց էշթեֆի «Ազատամարտ» աւուր, որ ՀՄԸՄ-ի կիբանանի շրջանի սկստած խմբապետերը քանի մը փոփոխ օժանդակութիւններուն եւ առանձին հակերու վերածեցին զանոնք: Այնուհետեւ, հրապարակեցան զպոլիթիկայի ազգային-բարեփոխական հաստատութիւններու ներկայացուցիչները, որոնք ստանձնեցին իրենց բաժինները եւ տոնական օրերու նախօրեակին բաժնեցին ընկերային իրենց պարագաներուն: ■

դանի կը պահեն մեր սիրտը, վերեւ նշուած տարբեր բնագաւառներու մէջ: Խորհրդածութեան այս առաջին խումբին նպատակը չէ ինքնուրոյն տիրել խորհրդածութեան աշխատանքին եւ կը փափաքի լայնօրէն ընդարձակել հարցին քննարկումը: Հետեւաբար, ան պիտի օժտուի բարի կամքի տէր նոր տարբերով, որոնք ի յայտ պիտի գան այս կոչին տեղեկանայէլ յետոյ:

Բայց հրատապ է գործել, եւ գործընթացը սկսելու համար կ'առաջարկուի ստանալ եւ վերլուծել առաջին հակազդեցութիւններն ու խորհրդածութիւնները ել-գիրի հետեւեալ հասցէէն.

contact@francais-armeniens.com

Այս խորհրդածութիւններու մասնակիցներն ու աշակցողները, կարելի ամէնէն մօտ առեւնէն պիտի հրապարակեն մասնակցելու համապարփակ ծրագրի մը մշակման հանդիպումի մը:

Այս ծրագիրը այնուհետեւ պիտի ներկայացուի CCAF-ի որոշումներ կայացող ներկայի մարմիններուն:

Ներկայի այն աստիճանի համաձայնի մէջ, որ կ'ապրինք ի Հայաստան եւ ի Ֆրանսա, մենք պէտք է յստաջ տանինք այս խորհրդածութիւնը եւ յանգինք յաւակնոտ որոշումներու, որպէսզի Ֆրանսայի Հայութեան բոլոր շմարի եւ մնայ վառվուն:

Ի դիմաց՝ Ֆրանսացի-Հայերու խումբին՝ ԴԱՆԻԷՔ ԲԵՐԻՔՅԱՆ

ՀՆԴԿԱՀԱՒԵՐ

Նշան Պեշիկթաշեան

ԵՆԳՈՒՊ ՃԻՒՆՆ

Ա. ՄԱՍ

ՎԵՐԵԼՔ

Յակոբ պատմեց մօրը՝ Արիստիտին հետ ունեցած խօսակցութիւնը:

Մայրը պատասխանեց.

- Հիմակ խելքս պտուկի սկսաւ, որ երգելով պիտի կրնաս հաց ուտել ու պիտի կրնաս ինձի ալ կերցնել:

- Մինակ քեզի՞, մինակ ինձի՞...

- Հապա ուրիշ որո՞ւ, շո՞ն...

- Մայրիկս, կնիկիս ալ, զաւակներուս ալ պիտի կրնամ հաց կերցնել:

- Ես քիչ մը թովմաս առաքեալին ազգական եմ: Մինչեւ քի փաշաներուն առջեւ չեղբես ու երգելէդ ետքն ալ աւուճ մը ոսկի չբերես, պիտի չհաւատամ որ մէկը խաղ ու մանր կանչելով կրնայ մարդու պէս դրամ վատակի:

Առ ձայն ունեցողները օր մը կուշտ, օր մը անօթի մարդիկ են: Անոնցմէ մէկը ճանչցած եմ, ՌԱՆԵՆԵ Օհանիկը: Աղջիկնութեանս վրաս սիրահարուած էր: Կը խենթեանք ինձի համար: Ես իր վրայ չնայեցայ, ապարանջան մը չունենալուն համար: Չուզեցի որ մարդիկ վրաս խնդան, խաղ կանչող մը առաւ ըսելով: Ո՛վ գիտէ ուրտեղուանքը ինչպէս է, ուրտեղուանքը կը քաշըշուի կոր հիմակ...

Մայրիկս, Օհանիկին քեզի բռնուած ըլլալը չէի գիտեր: Բայց դուն ալ գիտցիր որ Օհանիկը հիմակ հարստացած է: Մեծ անուն ունի: Եւ Օհանիկին ձայնը արձայն է: Արձայն ձայնովը հարստացաւ: Իսկ իմ ձայնս ոսկի է: Արիստիտին ըսաւ: Ուրեմն ես անկէ է՛ն քիչը չորս-հինգ անգամ աւելի կրնամ հարստանալ ու դառնալ նշանաւոր:

Օհանիկը իրա՞ւ հարստացած է...

- Հարկաւ: Բայց սա ա՛լ գիտցիր, որ ալ քու երեսդ չի նայիր: Տունի տեղի տէր է. կարգուած է. ճահիլ ու ճամբագ կնիկ մը ունի, նաեւ աղուորիկ ազջիկ մը: Կ'ուզէ՞ս որ իր փեսան ըլլամ...

- Ես իրաւ անխելք եմ եղեր, Օհանիկը քիթիս շտանելով:

- Նորէն բախտաւոր ես, որ ինձի պէս ոսկի գաւակ մը ունեցար...

- Ըսել է Օհանիկը ատանկ... Ըսել է Օհանիկը մարդու կարգ անցաւ... Որո՞ւն խելքէն մտքէն կ'անցնէր... Աղջիկները մարգարէ ըլլալու են, բախտաւոր ըլլալու համար:

- Ես Օհանիկին լոյսը պիտի խաւարեմ:

- Առաջ Աստուած, դուն ալ անոր պէս մա՛րդ ըլլաս. անկէ ալ մեծ ըլլաս:

- Օր մը Օհանիկը հարկաւ պիտի ճանչնամ: Պիտի ըսեմ քու տղադ ըլլալու...

- Ամա, հօրդ երկաթագործ ըլլալը չըսես...

- Ոչ, չեմ ըսեր: Կ'ըսեմ, որ հայրս Գոց Շուկային մէջ ոսկերիչ էր ու ինձի համար ոսկի կոկորդ մը շինած էր, ոսկի պիւլպիւլով մը...

Հակառակ Յակոբին համար պարզուող շողողուն հեռանկարին, մայրը յաճախ յանկերգի մը պէս տղուն կը կրկնէր.

- Ըսածներս մի՛ մոռնար: Մարդը ան է քի դրամ կը վատակի: Մեծ մարդը ան է քի շատ դրամ կը վատակի: Նայէ՛ քի մա՛րդ ըլլաս: Իրամ ունեցողին կ'ըսեն «կարողութեան տէր», «չէնքով շնորհքով մարդ», «ազնուական մարդ»: Իրամ չունեցողին ալ կ'ըսեն «խելք», «անշնորհք», «ողորմելի»:

Նայէ՛ քի մա՛րդ ըլլաս դուն: Ըչըր աշխարհի է՛ն խելացին ըլլաս ու դրամ չունենաս, աշխարհի է՛ն ապուշին տեղը կը դնեն քեզի: Է՛ն ապուշը ըլլաս ու դրամ ունենաս՝ է՛ն խելացիին տեղը կը դնեն քեզի: Ըչըր ատ գործէն դրամ ելլալուն խելքը կը պտուկի կոր, ըրէ: Պէտք է է՛ն քիչը Օհանիկին երկու անգամը դրամ վատակի:

* * *

Յակոբ չորս ամիս, շաբաթը հինգ օր, գնաց Բերա, բնակարանը Արիստիտի, մարդկու ձայնը եւ սորվելու ծանրալուրջ կազմէներ, համակ ողբերգութիւն՝ իբրեւ եղանակ, ու փիլիսոփայական բանաստեղծութիւն՝ իբրեւ խօսք:

Եթէ Արիստիտի վարպետ էր՝ իբրեւ ուսուցանող, Յակոբ ալ ընդունակ էր՝ իբրեւ ուսանող: Կազմէներուն արապէսք ու ֆարսի բաւիղներուն մէջ բաւական յաջողեցաւ, ճոխացնելով իր բառամթերքը: Այդ բանահիւստութիւններուն բառերը քաղուած էին երեք լեզուներէ, թրքերէն, արաբերէն ու պարսկերէն: Յակոբ մանկկուտիկի մը նման, մտաւ հազարամէկ գիշերներու հէքեաթներուն մէջ, շլանալով շքեղութիւններէն Արեւելքի բանին:

Չորս ամսուան ընթացքին, Յակոբ, իբրեւ երգիչ դարձած էր ներկայանալի:

Արիստիտի իր աշակերտին անուր թարգմանելով ու մականունին «եան»-ը կրճատելով ստեղծեց արուեստագիտական անուն մը.՝

Նազուկ Ճիւրա:

(Շար. 141)

Նոր Տարուան եւ Ս. Մննդեան առթիւ կարելի է նաեւ «Նոր Յառաջ»-ի տարեկան բաժանորդագրութիւն նուիրել. Հեռաձայն՝ 01 55 32 06 72, էլ-նասցէ՝ abonnement@norhatch.com